

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ**



Ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակում Կոտայքի մարզի ուսումնական հաստատություններում հայտարարված էր անմոռուկների պատրաստման օր:

5-12-րդ դասարանի աշակերտներն իրենց ուսուցիչների հետ միասին պատրաստեցին Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների պաշտոնական խորհրդանիշը՝ անմոռուկը:

Մինչ պատրաստելը երեխաներին բացատրվեց անմոռուկի խորհուրդը, գույների նշանակությունը, որից հետո սկսվեց պատրաստման գործընթացը:

Յուրաքանչյուր աշակերտ իր պատրաստած անմոռուկի հակառակ կողմում նշեց իր անունը, ազգանունը, մարզը, դպրոցը, դասարանը:

Դրանք փոխանցվելու են միջոցառումներն համակարգող պետական հանձնաժողովին, որպեսզի բաժանվեն ապրիլի 24-ին Երևան այցելված հյուրերին: